



ՄԱՐԻԱՆԱ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասիստենտ

ՀԵՌԱՎԱՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ. ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Սոցիալ-տնտեսական ժամանակակից պայմաններում կրթության ոլորտի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է հասարակության բոլոր անդամներին որակյալ և մատչելի կրթության հասանելիության ապահովումը՝ անկախ նրանց գտնվելու վայրից, սոցիալական կարգավիճակից և կրթական գործընթացին խոչընդոտող այլ գործոններից: Այդպիսի խնդիրների լուծմանը նպաստում է կրթության ոլորտում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) կիրառումը, իսկ վերջիններիս ներդրման առավելագույն արդյունքը դրսևորվում է հեռավար կրթության մեջ:

Հիմնաբառեր. հեռավար կրթություն, տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ, կրթական հաստատություն, հեռավար ուսուցում, կրթական ծառայություններ

120, 121, 125, 129, 030

Հասարակական կյանքի, դրա տեխնիկական և սոցիալական ենթակառուցվածքների շրջադարձային փոփոխությունների պայմաններում որոշիչ է դարձել տեղեկատվությանն արագ տիրապետելու կարողությունը, քանի որ դա հասարակության զարգացման ռազմավարական գործոն է համարվում: Այդ իսկ պատճառով նոր՝ տեղեկատվական հասարակությանն անցման հաջողությունը մեծապես կախված է այդ հասարակության պահանջներին արագ արձագանքելու կրթական համակարգի պատրաստվածությունից:

Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) զարգացումը և լայն տարածումը տնտեսության ոլորտներում պահանջում է կրթական գործընթացի բոլոր մասնակիցների ինչպես մասնագիտական, այնպես էլ հոգեբանական պատրաստվածություն: Ինչպես նշում է Է. Թոֆլերը՝ «...ապագայի տեխնոլոգիաներին պետք չեն լինի միլիոնավոր թերուսմարդիկ, ովքեր պատրաստ կլինեն կատարելու անընդհատ կրկնվող աշխատանքներ, մարդիկ, ովքեր անտրտունջ կկատարեն ղեկավարության հրամանները, այլ պետք կլինեն նրանք, ովքեր կունենան քննադատական մտա-

ծողություն, կկարողանան կողմնորոշվել նոր պայմաններում, արագ կտարբերեն անընդհատ փոփոխվող իրականության նոր կապերը: Այդպիսի հասարակությանը, Չ. Սնոունի դիպուկ բնութագրմամբ, անհրաժեշտ են մարդիկ, ունենալով «արյան մեջ է ապագան»¹:

ՏՀՏ-ն այսօր ամբողջ աշխարհում կրթության զարգացման կարևորագույն բաղադրիչն է, և, ինչպես նշում էր Կենտրոնական Ֆլորիդայի համալսարանի ռեկտոր Ջոն Կ. Հիտը. «Տասնամյակներ շարունակ մենք քննարկել ենք ՏՏ և բարձրագույն կրթության միջև կապը, բայց միայն այսօր ենք հասկանում տեխնոլոգիաների առաջ բերած նշանակալի փոփոխությունները, ինչի արդյունքում բուհի համար անհնար և անցանկալի է առանձնացնել ռազմավարական ծրագրերը, նպատակներն ու ուղղությունները ՏՏ ոլորտում նախաձեռնություններից, ռեսուրսներից և կառավարումից»²:

ՏՀՏ կիրառումը կրթության ոլորտում ենթադրում է գրեթե ցանկացած տվյալների բազայի և գրադարանների հասանելիություն, որոնք գտնվում են համացանցի տիրույթում, քանի որ հնարավոր չէ յուրաքանչյուր կրթական հաստատությունում կենտրոնացնել մարդկության գիտական և կրթական ուսումնասիրությունների ու հետազոտությունների արդյունքում կուտակված տեղեկատվական ռեսուրսները:

Պարզ է դառնում, որ ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմաններում կրթության ոլորտի կարևորագույն խնդիրներից է հասարակության բոլոր անդամներին որակյալ և մատչելի կրթության հասանելիության ապահովումը՝ անկախ նրանց գտնվելու վայրից, սոցիալական կարգավիճակից և կրթական գործընթացին խոչընդոտող այլ գործոններից: Այդպիսի խնդիրների լուծմանը նպաստում է կրթության ոլորտում ՏՀՏ կիրառումը, իսկ վերջիններիս ներդրման առավելագույն արդյունքը դրսևորվում է հեռավար ուսուցմամբ:

Փաստ է, որ ներկայումս աշխարհի շատ երկրներում ՏՀՏ կիրառմամբ կրթության անհատական ձևերը լայն տարածում են ստացել, և հեռավար կրթություն առաջարկում են ոչ միայն բուհերը, նախնական և միջին մասնագիտական կրթական հաստատություններն ու դպրոցները, այլ նաև բազմաթիվ ուսումնական կենտրոններ և խորհրդատվական ընկերություններ: Ինչպես ցույց է տալիս կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման և կիրառման զարգացած երկրների փորձը, հաջողության են հասնում այն երկրները, որոնք, հիմնվելով ավանդական սկզբունքների վրա, տարածում են բաց կրթության գաղափարախոսությունը և կրթական ողջ գործընթացում ներդնում նորարարական տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ:

Գիտնականներ Հարիսոնը և Նիպերը կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման ու հեռավար կրթության պատմությունը ներկայացնելիս այն բաժանել են փուլերի, որոնք ներառում են փոստային հաղորդակցությունից մինչև ռադիոհաղորդում, մուլտիմեդիայի տարբեր միջոցների կիրառում, իսկ ներկայումս արդեն վիրտուալ կրթություն՝ հիմնված վեբ տեխնոլոգիաների վրա³:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրթության ոլորտում ՏՀՏ կիրառման հեռանկարները պայմանավորված են արդեն իսկ առկա փորձով,

¹ Toffler A., A Future Shock, 1970. Тоффлер, Элвин. Шок будущего. Перевод на русский язык: А. Мирер, И. Москвина Тарханова, В. Кулагина-Ярцева, Л. Бурмистрова, К. Бурмистров, Е. Комарова, А. Микиша, Е. Руднева, Н. Хмелик, М., 2001. // Электронная публикация: Центр гуманитарных технологий. 26.01.2011. <http://gtmarket.ru/laboratory/basis/4797/4816>

² Hitt J., Connecting IT possibilities and institutional priorities. EDUCAUSE Review, 36 (6), pp. 8–9.

³ St'u Distance Education for the Information Society: Policies, Pedagogy, and Professional Development. Analytical Survey. UNESCO IITE, 2000, էջ 9:

որոնք ապացուցում են դրա արդյունավետությունը, իսկ որոշ հետազոտողներ էլ (R.Owsten, G.Alan, Chute & Kate M.Gulliver և ուրիշներ) կարծում են, որ որակյալ նախապատրաստման և իրականացման պայմաններում կրթության հեռավար ձևը կարող է նույնիսկ ավանդական ձևից ավելի արդյունավետ լինել: Կրթության այս ձևի անվիճելի առավելություններից հաճախ նշում են մեծածավալ տեղեկատվության հասանելիությունը, ինչը հատկապես արժեքավոր է այն օգտագործողների համար, ովքեր հեռու են գիտական կենտրոններից, քանի որ, այդպիսով, ստեղծվում են գիտական և կրթական տեղեկատվության տարածման հավասար պայմաններ հասարակության բոլոր անդամների համար⁴:

Բարձրագույն կրթություն ստանալ՝ լինելով կրթական հաստատությունից հեռու, առաջին անգամ հնարավոր է եղել 1836 թվականին, երբ Մեծ Բրիտանիայում հիմնադրվել է Լոնդոնյան համալսարանը⁵: Հետագայում հեռավար կրթության զարգացմանը մեծապես նպաստել է 1969 թվականին վարչապետ Գ.Վիլսոնի նախաձեռնությամբ հիմնադրված Մեծ Բրիտանիայի Բաց համալսարանը, ինչը լայն տարածում է ստացել նաև մի շարք այլ երկրներում: Ներկայումս այս համալսարանում ուսում է ստանում ավելի քան 200.000 ուսանող աշխարհի տարբեր երկրներից⁶: Գոյության տասնամյակների ընթացքում հեռավար ուսուցման առաջին համալսարանը տարիներ շարունակ աշխարհում եղել է առաջատար:

20-րդ դարի 90-ականների կեսերին Անգլիայում գործունեություն էր ծավալում մմանատիպ 40 կրթական հաստատություն, որտեղ տարեկան դիմում էր մոտ 65.000 մարդ: Ներկայումս Մեծ Բրիտանիայում մոտ 50 համալսարաններ առաջարկում են հեռավար կրթության ասպիրանտական ծրագրեր⁷: Նշենք, որ Մեծ Բրիտանիան ԵՄ երկրների շարքում առաջատար է ինչպես կրթության ընդհանուր տեղեկատվայնացման, այնպես էլ կրթության ոլորտում S<S ներդրման մակարդակով:

Ֆրանսիայում 1939 թ. ուսումնական հաստատություն հաճախելու հնարավորությունից զրկված երեխաների համար փոստային կապի միջոցով ստեղծվեց Հեռավար ուսուցման ազգային կենտրոնը՝ CNED-ը: Ներկայումս նշված կենտրոնը հեռավար ուսուցման Եվրոպայի խոշորագույն կրթական հաստատությունն է, որի կազմում ընդգրկված է 8 համալսարան, իսկ աշխատակիցների թիվը գերազանցում է 8.000-ը: Նշենք նաև, որ այստեղ ավելի քան 350.000 մարդ աշխարհի 120 երկրից կրթություն է ստանում համացանցի և էլեկտրոնային փոստի, ժամանակակից տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների և ուսումնական ծրագրերի միջոցով⁸:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Եվրոպայում առաջին վիրտուալ համալսարանը ստեղծվել է Շոտլանդիայում 1995 թ.: Վերջինիս խնդիրն էր համացանցի միջոցով զարգացնել նորագույն կրթական տեխնոլոգիաները արևմտյան Շոտլանդիայի հինգ բուհերի (Գլազգո, Ստրեյտչկլայդ և այլն) ուսանողների համար⁹:

⁴ Տե՛ս **Ратнер Ф.**, Разработка электронных образовательных ресурсов: зарубежный опыт. Казань, 2008. <http://old.kpfu.ru/fpk/docs/ratner.pdf>, էջ 12:

⁵ Տե՛ս <http://www.london.ac.uk/3.html>

⁶ Տե՛ս <http://www.open.ac.uk/>

⁷ Տե՛ս <http://www.britishcouncil.ru/>

⁸ Տե՛ս <http://www.cned.fr>

⁹ Տե՛ս **Тавгень И.**, Дистанционное обучение: опыт, проблемы, перспективы. 2-е изд., исправл. и доп. /Под редакцией Ю.Позняка, "Электронная книга БГУ", 2004, էջ 42:

Վերջին ժամանակներս հեռավար կրթություն տրամադրող եվրոպական հաստատություններում ավելի ու ավելի կիրառելի են դառնում ժամանակակից համակարգչային և հեռահաղորդակցության տեխնոլոգիաները, էլեկտրոնային կրթական ծրագրեր են մշակվում ավելի քան 30 երկրներում, այդ թվում՝ թույլ զարգացած:

Հեռավար կրթության ոլորտում երկար տարիների պատմություն ունի նաև Ավստրալիան: 1911 թ. բուհական մակարդակի ծրագրերով աշխատանքներ սկսեց իրականացնել Քվինսլենդի համալսարանը Բրիսբենում, իսկ արդեն 1914 թ. փոստային կապի միջոցով դպրոցական ծրագրերով կրթություն կազմակերպվեց այն երեխաների համար, ովքեր ապրում էին դպրոցից հեռու: Հետագայում այդ փորձը տարածվեց միջին դպրոցում և տեխնիկական հաստատություններում սովորողների շրջանում: Դպրոցականների համար նմանատիպ կրթական համակարգեր սկսեցին կիրառվել նաև Կանադայում և Նոր Զելանդիայում:

Այսօր կրթական ծառայությունների շուկայում որոշ ասիական երկրներ ևս առաջարկում են առանձնահատուկ կրթական մոդուլներ, կուրսեր և ծրագրեր հեռավար ուսուցման համակարգում, իսկ համալսարաններում մշակվում և գործադրվում են նոր տեխնոլոգիաներ, տարբեր մոտեցումներ: Ասիայում գործում են մոտ 70 համալսարաններ, որոնցից 7-ը աշխարհի ամենամեծ 11 համալսարանների շարքում են՝ ավելի քան 100.000 ուսանողով: Ասիական երկրներում մշակվում են յուրահատուկ ծրագրեր, որոնք ինքնակրթությունը արդյունավետորեն համադրում են վիրտուալ և ավանդական կրթության տարրերի հետ:

20-րդ դարի 70-80-ական թվականներին հեռավորության վրա կրթություն տրամադրող ուսումնական հաստատություններ ստեղծվեցին նաև Եվրոպայի և Ասիայի մի շարք այլ երկրներում՝ Իսպանիա (1972), Նիդեռլանդներ (1985), Պակիստան (1974), Թաիլանդ (1978), Կորեա (1982), Ինդոնեզիա (1984), Հնդկաստան (1985) և այլն:

Այդպիսով՝ հեռավար կրթության միջոցով տեղեկատվական ռեսուրսներն ակտիվանում են, ինչն էլ դրա զարգացման հայեցակարգային հիմքն ու գաղափարախոսությունն է: Սրանով պայմանավորված՝ ամբողջ աշխարհում ավելի ու ավելի լայն տարածում է ստանում կրթական ծրագրերի և խնդիրների լուծման համատեղ փորձը՝ կապված կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման և կառավարման հետ: Ավելի քան 20 տարի է՝ հեռավար կրթության ծրագրերով է գործում Իսպանիայի Հեռահար կրթության ազգային համալսարանը (UNED), որում ընդգրկված են 58 կրթական կենտրոններ տվյալ երկրից և 9 օտարերկրյա կենտրոններ (Բոնն, Փարիզ, Լոնդոն, Ժնև և այլն)¹⁰:

Բալթյան երկրների մոտ 50 համալսարաններ է համախմբում հեռավար կրթություն իրականացնող Բալթյան համալսարանը (THE BALTIC UNIVERSITY), որը ստեղծվել է Շվեդիայում¹¹: Օգտագործելով արբանյակային հեռուստատեսության համակարգը՝ 10 երկրների ուսանողներ և գիտաշխատողներ հնարավորություն են ստացել ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող թեմաների շրջանակում իրականացնելու գիտական և կրթական հաղորդակցում¹²:

¹⁰ Տե՛ս <http://portal.uned.es/portal/page? PORTAL>

¹¹ Տե՛ս <http://www.balticuniv.uu.se>

¹² Տե՛ս <http://www.distance-learning.ru/db/el/F97CC06AB7238DAFC32571D90039F5A1/doc.html>

Կրթության ոլորտում համացանցի և ՏՀՏ կիրառմամբ առաջատար են համարվում նաև Կանադան և Իսլանդիան, քանի որ այդ երկրները ցանկանում են պատրաստ լինել՝ անկախ հեռահաղորդակցության բնագավառում առկա ֆիզիկական խոչընդոտներից՝ հեռավորությունից ու դժվար կլիմայական պայմաններից: Այս երկրների ուսումնական հաստատությունները ներառված են University of the Arctic համալսարանական ցանցում, որը ներառում է 31 համալսարան աշխարհի «ամենացուրտ» երկրներից¹³:

Պետք է նշել, որ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում հեռավար կրթության ներդրմանն ու զարգացմանը մեծապես նպաստել է ռուսական կրթական հաստատությունների գործունեությունը: Այսպես՝ Ռուսաստանում այս բնագավառում տեղեկատվական տեխնոլոգիաները ներդրվել են դեռևս 1907 թ., իսկ արդեն 1917 թվականից հեռավար ուսուցումն այստեղ լայն տարածում ստացավ. առաջարկվում էին բազմաբնույթ ծրագրեր կրթության տարբեր մակարդակներում:

Ներկայումս հեռավար ուսուցման հնարավորություն են ընձեռում ոչ միայն եվրոպական և ասիական, այլ նաև ամերիկյան կրթական հաստատությունները: 20-րդ դարի 60-ական թթ. ԱՄՆ-ում մի շարք միջոցառումներ իրականացվեցին կրթության ոլորտում ՏՀՏ ներդրման և հեռավար կրթության կազմակերպման նպատակով: Ամերիկյան մի քանի ճարտարագիտական քոլեջներ ուսումնական ծրագրեր իրականացնելու նպատակով սկսեցին օգտագործել հեռուստատեսության հնարավորությունները, իսկ 1984 թ. այդ ծրագրի շնորհիվ ստեղծվեց Ազգային տեխնոլոգիական համալսարանը (National Technological University, NTU): Այսօր ԱՄՆ հեռավար կրթության ծրագրերով կրթություն է ստանում ավելի քան մեկ միլիոն ուսանող՝ հանրային հեռարձակման միջոցով (Public Broadcasting System, PBS-TV՝ 1989 թ. սկսած): Ի դեպ, կրթական ծրագրերը, որոնք փոխանցվում են չորս ուսումնական ավիքով, հասանելի են ամբողջ երկրում:

Հանրակրթական ուսումնական գործընթացում հեռավար ուսուցումն է, որը հասանելիության մեծ հնարավորություններ է ներառում հասարակության բոլոր շերտերի, մասնավորապես՝ հաշմանդամ երեխաների համար: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ ԱՄՆ-ի կառավարությունը մշակել է հեռավար կրթության ծրագիր (Distance Education Demonstration)¹⁴՝ նախատեսված հաշմանդամների և այն անձանց համար, ովքեր չեն կարող դուրս գալ իրենց բնակության վայրից:

Այսպիսով՝ կրթության ոլորտում ՏՀՏ կիրառման և հեռավար կրթության միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կարելի է առանձնացնել զարգացման երկու մոտեցում՝ եվրոպական (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Շոտլանդիա, Նիդեռլանդներ և այլն) և հյուսիսամերիկյան (ԱՄՆ և Կանադա): Պետք է նշել, որ այս մոտեցումներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները՝ պայմանավորված տվյալ տարածաշրջանների մշակութային, կրթական և ազգային ավանդույթներով: Սակայն անհերքելի է, որ կրթության այս տարբերակն առավել լայն տարածում է ստանում հատկապես այն երկրներում, որտեղ կան անհրաժեշտ նախադրյալներ, մասնավորապես՝ լավ զարգացած կրթական համակարգ և հեռահաղորդակցության ենթակառուցվածք:

¹³ Տե՛ս <http://www.uarctic.org>

¹⁴ Տե՛ս <http://www2.ed.gov/programs/disted/index.html>

ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան համարվում են կրթության ոլորտի աշխարհի առաջատար երկրները: Թերևս դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ կրթության բնագավառի տարբեր հետազոտությունների արդյունքում նշված երկրներն ունեն բավական բարձր վարկանիշ: Universitas 21 համալսարանների միջազգային ցանցը ներկայացրել է 2015 թվականի բարձրագույն կրթության ազգային համակարգերի վարկանշային աղյուսակը, որում ԱՄՆ-ն առաջատարն է (U21 Rankings of National Higher Education Systems 2015)¹⁵: Հետազոտության հեղինակների կարծիքով՝ ժամանակակից պետությունների տնտեսական զարգացումը հիմնականում պայմանավորված է կրթված ու որակավորված կադրերի և տեխնոլոգիաների առկայությամբ, քանի որ դրանց շնորհիվ բարձրանում է աշխատանքի արտադրողականության մակարդակը: Ծրագրի գլխավոր նպատակն է բացահայտել այն երկրները, որոնք առաջարկում են լավագույն բարձրագույն կրթություն: Պետք է նշել, որ Universitas 21 վարկանշային աղյուսակում գնահատվում են այնպիսի երկրների բարձրագույն կրթության համակարգերը, որոնք գտնվում են տնտեսական զարգացման տարբեր փուլերում: 2015 թվականի հետազոտություններում ներառվել է 50 երկիր, իսկ տասնյակում են նաև Շվեյցարիան, Ղանիան, Ֆինլանդիան, Շվեդիան, Կանադան, Նիդեռլանդները, Մեծ Բրիտանիան, Սինգապուրը, Ավստրալիան¹⁶:

Աշխարհի լավագույն համալսարանների վարկանշային աղյուսակում (THE World University Rankings 2015–2016)¹⁷ ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան ևս առաջին տեղում են: Սա համընդհանուր հետազոտություն է, որն իրականացվել է բրիտանական Times Higher Education հրատարակչության կողմից Thomson Reuters տեղեկատվական խմբի օժանդակությամբ: Լավագույն տասնյակը զբաղեցրած համալսարանները ներկայացված են աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 1

Աշխարհի լավագույն համալսարանների վարկանշային աղյուսակը¹⁸

Վարկանիշ	ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	Երկիր
1.	Կալիֆոռնիայի տեխնոլոգիական ինստիտուտ	California Institute of Technology ԱՄՆ
2.	Օքսֆորդի համալսարան	University of Oxford Մեծ Բրիտանիա
3.	Ստենֆորդի համալսարան	Stanford University ԱՄՆ
4.	Քեմբրիջի համալսարան	University of Cambridge Մեծ Բրիտանիա
5.	Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարան	Massachusetts Institute of Technology ԱՄՆ
6.	Հարվարդի համալսարան	Harvard University ԱՄՆ
7.	Պրինստոնի համալսարան	Princeton University ԱՄՆ
8.	Լոնդոնի կայսերական քոլեջ	Imperial College London Մեծ Բրիտանիա
9.	Շվեյցարական ֆեդերալ տեխնոլոգիական ինստիտուտ Ցյուրիխում	ETH Zurich — Swiss Federal Institute of Technology Zurich Շվեյցարիա
10.	Չիկագոյի համալսարան	University of Chicago ԱՄՆ

¹⁵ Տե՛ս <http://www.universitas21.com>

¹⁶ Տե՛ս <http://gtmarket.ru/news/2015/06/17/7207>

¹⁷ Տե՛ս <https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2016/world-ranking#!/page/0/length/25>

¹⁸ Տե՛ս <https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2016/world-ranking#!/page/0/length/25>

Ինչպես տեսնում ենք, լավագույն տասնյակը զբաղեցրած համալսարաններից վեցը գտնվում են ԱՄՆ-ում, երեքը՝ Մեծ Բրիտանիայում, մեկը՝ Շվեյցարիայում:

Հարկ է նշել սակայն, որ բարձրագույն կրթության ոլորտում և հեռավար ուսուցման առաջատար համարվող ԱՄՆ-ն 2015 թվականին ՏՀՏ զարգացման համաթվի ցուցանիշով զբաղեցրել է ընդամենը 15-րդ տեղը (Հվ. Կորեա, Դանիա, Իսլանդիա, Մեծ Բրիտանիա, Շվեդիա, Լյուքսեմբուրգ, Շվեյցարիա, Նիդեռլանդներ, Հոնկոնգ, Նորվեգիա), իսկ աշխարհի երկրների ցանցային պատրաստվածության վարկանշային աղյուսակում՝ 7-րդ հորիզոնականը (Սինգապուր, Ֆինլանդիա, Շվեդիա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Շվեյցարիա, ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Լյուքսեմբուրգ, Ճապոնիա):

Աղյուսակ 2

ՏՀՏ զարգացման¹⁹ և ցանցային պատրաստվածության²⁰ համաթվերը 2015 թ.

ՏՀՏ զարգացման համաթիվ (The ICT Development Index 2015)		Ցանցային պատրաստվածության համաթիվ (The Networked Readiness Index 2015)	
Հարավային Կորեա	8.93	Սինգապուր	6.0
Դանիա	8.88	Ֆինլանդիա	6.0
Իսլանդիա	8.86	Շվեդիա	5.8
Մեծ Բրիտանիա	8.75	Նիդեռլանդներ	5.8
Շվեդիա	8.67	Նորվեգիա	5.8
Լյուքսեմբուրգ	8.59	Շվեյցարիա	5.7
Շվեյցարիա	8.56	ԱՄՆ	5.6
Նիդեռլանդներ	8.53	Մեծ Բրիտանիա	5.6
Հոնկոնգ	8.52	Լյուքսեմբուրգ	5.6
Նորվեգիա	8.49	Ճապոնիա	5.6

Այսպիսով՝ վերջին տասնամյակներում զարգացած երկրները ամրապնդում են իրենց դիրքերը կրթական ծառայությունների շուկայում, այն դեպքում, երբ զարգացող երկրները փորձում են հաղթահարել տվյալ ոլորտի խոչընդոտները՝ ապահովելով տնտեսական և սոցիալական կայունության առանցքային տարրերի առկայությունը: Այդ իսկ պատճառով ՏՀՏ ներդրումը և դրա կառավարումը կրթական գործընթացում մշտապես գտնվում է պետական կառույցների ուշադրության կենտրոնում և համարվում է աշխարհի շատ երկրների ներդրումային ծրագրերի օբյեկտ:

Օգտագործված գրականություն

1. Սուվարյան Յու.Մ., Հարությունյան Վ.Լ., Սարգսյան Վ.Ա., Խաչատրյան Վ.Վ., Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը, Եր., 2013:
2. Тавгень И.А., Дистанционное обучение: опыт, проблемы, перспективы. [Электронный ресурс]: Научное издание - 2-е изд., исправл. и доп. / под редакцией Ю.В.Позняка-Электрон. текст. дан. Мн.: "Электронная книга БГУ", 2004
3. Ратнер Ф.Л., Разработка электронных образовательных ресурсов: зарубежный опыт, Казань, 2008.
<http://old.kpfu.ru/fpk/docs/ratner.pdf>

¹⁹ Տե՛ս <http://gtmarket.ru/news/2015/12/03/7267>

²⁰ Տե՛ս <http://gtmarket.ru/news/2015/04/17/7128>

4. Distance Education for the Information Society: Policies, Pedagogy, and Professional Development. Analytical Survey. UNESCO IITE, 2000.
5. Hitt J.C., Connecting IT possibilities and institutional priorities. EDUCAUSE Review, 36 (6).
6. Toffler A., A Future Shock, 1970. Тоффлер Элвин, Шок будущего. Перевод на русский язык: А. Мирер, И. Москвина-Тарханова, В. Кулагина-Ярцева, Л. Бурмистрова, К. Бурмистров, Е. Комарова, А. Микиша, Е. Руднева, Н. Хмелик. М., 2001. // Электронная публикация: Центр гуманитарных технологий. 26.01.2011.
URL: <http://gtmarket.ru/laboratory/basis/4797/4816>
7. www.balticuniv.uu.se
8. www.britishcouncil.ru
9. www.cned.fr
10. www.distance-learning.ru
11. www.gtmarket.ru
12. www.london.ac.uk
13. www.open.ac.uk
14. www.portal.uned.es
15. www.timeshighereducation.com
16. www.uarctic.org
17. www.universitas21.com
18. www2.ed.gov

МАРИАНА КОЧАРЯН*Ассистент кафедры "Управления" АГЭУ*

Зарубежный опыт дистанционного образования: теория и практика. – Одна из важнейших задач современного социально-экономического этапа развития - это обеспечение достигаемости и доступности всех членов общества качественным и доступным образованием. независимо от места расположения. социального статуса и других факторов. препятствующих образовательному процессу. Решению подобных задач способствуют применение в образовательной сфере информационных и коммуникационных технологий. а наибольший результат от внедрения ИКТ был отмечен при дистанционном образовании.

Ключевые слова: дистанционное образование, информационные и коммуникационные технологии, образовательные учреждения, дистанционное обучение, образовательные услуги.
I20, I21, I25, I29, O30

MARIANA KOCHARYAN*Assistant at the Chair of
"Management" at ASUE*

International Experience of Distance Learning: Theory and Practice. – One of the important issues of the education sector in current socio-economic circumstances is the provision of quality and affordable education to all the members of the society, regardless of their location, social status and other factors hindering the education process. The use of Information and Communication Technologies in education contributes to the solution of such problems, and distance learning is where the results of embedding ICT have been displayed to the greatest extent.

Key words: Distance Education, Information and Communication Technologies, Educational Institutions, Distance Learning, Educational Services.
I20, I21, I25, I29, O30